ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 600-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՏԻՐԱԽՆԱՄ ԹԵՄՆ, ՈՐ Ի ՌՈՒՄԻՆԻԱ

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեծաւ ուրախութեամբ Հայրապետական Մեր օրհնութիւններն ու սրտաբուխ շնորհաւորանքներն ենք յղում Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկեանին, հոգեւոր դասին, թեմական եւ համայնքային վարչութեանց պատուարժան անդամներին եւ բարեպաշտ ռումինահայութեանը՝ Ռումինիայի հայոց թեմի հիմնադրման 600-ամեակի առիթով:

Գոհութիւն եւ փառք ենք մատուցում Բարձրեալ Տիրոջը, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ զօրացնում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ աշխարհասփիւռ մեր զաւակներին առաջնորդելու Աստուածճանաչութեան ճշմարիտ արահետներով:

Աեաաասիկ, սիրելիք Մեր, Մայր Եկեղեցին աստուածշնորհ իր առաքելութիւնը արդեն 600 տարիներ փառքով իրականացնում է նաեւ Ռումինիայի օրհնեալ հողում՝ Լուսաւորչեան անմար կանթեղի լոյսից ճառագող նորոգիչ եւ կենսապարգեւ զօրութեամբ ջերմացնելով հոգիները բարեպաշտ հայութեան՝ Աստուած սիրելու եւ առ Աստուած ընթացքն իրենց անսայթաք պահելու: Ռումինիայի երբեմնի հայաշատ կենտրոններում բազում զոհողութիւններ յանձն առան մեր նախնիք՝ ջանք ու եռանդ չխնայելով յանուն ռումինահայութեան ազգային-եկեղեցական կեանքի զօրացման:

Տիրոջ կամքով Մենք առիթ ունեցել ենք լինելու Ռումինիայում եւ հոգու բերկրանք ու խնդութիւն ապրելու, որ հայաշունչ գաղութը, թեեւ թուով փոքրացած, շարունակում է բարեյաջող կազմակերպել համայնքային իր կեանքը եւ Գերաշնորհ Տ. Տիրայր Արքեպիսկոպոս Մարտիկեանի բարեխնամ առաջնորդութեամբ վառ պահել հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան ոգին: Ուրախալի էր Մեզ համար տեսնել Ռումինիայի պետութեան բարձրաստիճան ղեկավարների եւ հաւատաւոր ժողովրդի հարգանքն ու վստահութիւնը՝ հանդէպ ռումինահայ գաղութը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ հայոց աստուածպարգեւ Հայրենիքի հանդէպ ռումինահայութեան անսակարկ ու բոլորանուէր սէրն էր իր հոգում կրում Երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, որ շուրջ քառասուն տարիներ Բարձրեալի զօրակցութեամբ հովուեց հաւատաւոր հայութեանը եւ իր կենդանի գործերով ու վառ տեսիլքներով անգնահատելի ներդրում բերեց Հայրենիքի, Մայր Եկեղեցու եւ սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառութեանը:

Սիրելիք Մեր. դարասկզբի եւ հազարամեակի առաջին այս տարում ազգովին փօնախմբում ենք Հայոց Մեծ Դարձի՝ քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակելու 1700-ամեայ յոբելեանը: Տարին Ձեզ համար նշանաւորուած է նաեւ Տիրախնամ Ձեր թեմի հիմնադրման 600-ամեակով:

Հայոց Հայրապետիս պատգամն ու կոչն է Ձեզ, որ բազմապատկէք Ձեր ջանքերը՝ այս կրկնակ յոբելեանները Տիրախնամ Ձեր թեմում դարձելու հոգեւոր նորոգութեան եւ ազգային միասնականութեան ամրապնդման առիթ: Ամուր մնացէք Ձեր հաւատքի մեջ, հաստատուն՝ Հայրենիքի ու Մայր Եկեղեցու հանդէպ Ձեր սիրոյ մէջ:

Աղօթենք եւ գործենք հանուն մեր Եկեղեցու պայծառութեան, Հայրենիքի զօրացման եւ աշխարհաստիւռ մեր ժողովրդի բարօրութեան, որպէսզի բացուող նոր հազարամեակը ազգային մեր կեանքում լեցուն լինի երկնապարգեւ շնորհներով ու օրհնութիւններով:

Մաղթում ենք ի սրտէ, որ Աստուած խաղաղ երկնքի ներքոյ անշրջելի առաջընթաց ու բարգաւաճում պարգեւի Ռումինիայի պետութեանն ու ստեղծագործ ժողովրդին եւ անվրդով պահի Ռումինիայի հայոց Տիրախնամ թեմը՝ քաջառողջութիւն եւ գործոց յաջողութիւններ պարգեւելով թեմական բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկեանին, հոգեւոր դասին, թեմական ու համայնքային խորհուրդների պատուարժան անդամներին ու բարեպաշտ բոլոր հաւատացեալներին:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալք ի Մէնջ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 10-ն Յուլիսի
Յամի Տեառն 2001 եւ ի թուին հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 58